

Ս. Ղուկասի և Յովսեպոսինին հետ, և Աւետարաններուն՝ որոնց ընդօրինակութիւնները կը կատարէր, 60 ասպարէզ թիւը փոխեց 160 ի, իրականութեան հետ աւելի լաւ համաձայնեցնելու համար: Եմմաուոս-Նիկոպոլիսը Երուսաղէմէն առ նուազն 30 քիլոմէդը հեռու էր: Եթէ երկու աշակերտներուն համար դժուար էր Երուսաղէմէն դաշտի Եմմաուոսը երթալ և միեւնոյն օրը վերադառնալ սուրբ քաղաք, անոնց համար անկարելի էր Երուսաղէմ հասնիլ, մինչ Առաքեալները տակաւին հաւաքուած էին, երեկոյին մեկնելով Եմմաուոսէն, մինչ օրը տարաժամած էր: Սակայն եւ այնպէս, Եւսեբիոսի կարծիքին հետեւեցան ոմանք, ինչպէս Յերոնիմոս, և որ սակայն իր ուղղագրած Աւետարանին մէջ անփոփոխ պահեց 60 ասպարէզ թիւը: Բազմաթիւ Աւետարաններ այս թուականէն սկսեալ, կը կրեն 160 ասպարէզ ընթերցուածքը, բայց «անոնց հեղինակութիւնը, կ'ըսէ Թէչէնտորֆ, չի կրնար յաղթանակ տանիլ ընդդէմ հեղինակութեան ձեռագիրներուն, անոնք որ կը կրեն 60 ասպարէզ ընթերցուածքը»:

Նոյն տեղւոյն վրայ կը տեսնուին Գ. դարու հռոմէական աւերակներ՝ ընդարձակ տարածութեամբ, որոնց մէջ կային նաև Ե. կամ Զ. դարու եկեղեցիի մը աւերակները: Այս եկեղեցին ԺԲ. դարուն վերանորոգուած է տեղացի քրիստոնեաներու կողմէ: ԺԶ. դարուն է որ այս եկեղեցին առաջին անգամ տարբեր անունով մը կը յիշատակուի և կոչուած է «Եկեղեցի Մակաբեան եօթն եղբարց» (Bar. gd. էջ 48-51):

Եմմաուոսի խնդրոյն նկատմամբ վերը նշանակեցինք երկու տեղերուն վրայ տրուած կարծիքները. կայ նաև ուրիշ մը Եմմաուոս-Նիկոպոլիսի՝ այսինքն